ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ, ք. Գյումրի,
Երկու հազար տասնչորս թվականի
յոթը նոյեմբերի

Մենք՝ ՀՀ Շիրակի Մարզպետարան /ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16 /***ԱՅՍՈՒՀԵՏ ՎԱՐՁԱՏՈՒ***ի դեմս ԳՅՈՒՄՐՈՒ << ԷՆՐԻԿՈ ՄԱՏՏԵԻ >> ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ Փակ Բաժնետիրական ընկերություն /իրավաբանական հասցե՝ ք. Գյումրի, Շիրակացի 13/ տնօրեն ԳԱԳԻԿ ՄԵԼՈՒԺԱՆԻ ԱԴԱՄՅԱՆԻ ծնված 20.10.1960թ., անձն AM 0454963, տրված 23.09.2011թ., 016-ից, /հաշվառված ք. Գյումրի, Տեղյան 35/որը գործում է համաձայն լիազորագրի, լիազորագիրը տրված ՀՀ Շիրակի մարզպետ Ֆ. Ցոլակյանի կողմից 06/11/2014թ., լիազորագիր թիվ 02.2/09/5354-14/ մի կողմից և << ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> Պետական կառավարչական հիմնարկ /իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Եզնիկ Կողբացու փող., շ.1Ա/ 88 / ի դեմս ԿԱՐԻՆԵ ՌՈՒԲԵՆԻ ԹԱՅԻՐՅԱՆԻ ծնված 30/01/1961թ., անձն AK 0573053, տրված 23/07/2010թ., 004-ից, /հաշվառված ք. Երևան, Հ. Էմինի 7-33/ որը գործում է համաձայն լիազորագրի, լիազորագիրը տրված ՀՀ Առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. Կարապետյանի կողմից 30/10/2014թ. լիազորագիր թիվ ԱԿ/07/11410-14/***ԱՅՍՈՒՀԵՏ ՎԱՐՁԱԿԱԼ*** մյուս կողմից կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով «Վարձատուն» պարտավորվում է վճարի դիմաց «Վարձակալի» ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել 1.2 նշված գույքը

1.2. Վարձատուն պարտավորվում է վարձակալին հանձնել հետևյալ գույքը՝ Օբյեկտից տարածք –198.15քմ. , ամբողջ օբյեկտը բաղկացած է ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ – 3037.75քմ. /, ՍԵՓ. ԲՆԱԿԱՎ. ՀՈՂԱՄԱՍ – 0.588005հա. , որը գտնվում է Գյումրի քաղաքի Շիրակացու փողոց, թիվ 13/տասներեք/ "Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա" հասցեում / ***ԱՅՍՈՒՀԵՏ «ԳՈՒՅՔ»***

1.3. Գույքը պատկանում է Վարձատուին սեփականության իրավունքով ինչը հաստատվում է համաձայն անշարժ գույքի կադաստրի **Գյումրու** տարածքային ստորաբաժանման կողմից տրված **12.06.2001թ., թիվ 432060** սեփականության իրավունքի գրանցման վկայականով:

1.4. Գույքը Վարձակալին պետք է հանձնվի սույն պայմանագիրը ստորագրելու պահից 3/երեք/ օրվա ընթացքում:

1.5. Գույքը նախատեսված է օգտագործելու որպես **գրասենյակ :**

Սույն պայմանագրի գործողության ընթացքում Գույքի օգտագործման արդյունքում Վարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:

Սույն պայմանագիրը կնքելու պահին օբյեկտը վաճառված, նվիրված չէ, գրավ դրված չէ , արգելանքի տակ չի գտնվում, որը հաստատվում է ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի ***Շիրակի*** տարածքային ստորաբաժանման **Գյումրի** ապասարկման գրասենյակի կողմից տրված **թիվ US – 04112014-08-0010** միասնական տեղեկանքով, տեղեկանքում տվյալները լրացված են **04/11/2014թ. –ին:**

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Վարձատուն իրավունք ունի

2.1.1. Վարձակալից պահանջել գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին համապատասխան

2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը:

2.1.3. Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Վարձակալը Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ գույքի նշանակությանն անհամապատասխան:

2.2. Վարձատուն պարտավոր է

2.2.1. Գույքը վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում:

2.2.2. Գույքը վարձակալին հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով:

2.2.3. Վարձակալին նախազգուշացնել գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների / գրավի իրավունք սերվիտուտ և այլն / մասին

2.3. Վարձակալն իրավունք ունի

2.3.1. Պահանջել վարձատուից սույն պայմանագրի 1.4. կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել Գույքը:

2.3.2. Վարձատուից պահանջել իրեն տրամադրել գույքի պատկանելիքները և դրան վերաբերող փաստաթղթերը:

2.3.3. Գույքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերությունները հայտնաբերելիս իր ընտրությամբ:

2.3.3.1.Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու Գույքի թերությունները, կամ համաչափ իջեցնելու վարձավճարը:

2.3.3.2.Պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը:

2.3.4. Պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, գույքի վիճակը վատթարացել է:

2.4. Վարձակալը պարտավոր է

2.4.1. Ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար նախատեսված վճարը:

2.4.2. Պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում, հաշվի առնելով դրա բնական մաշվածությունը:

2.4.3. Պահպանել հակահրդեհային կանոնները և պատասխանատվություն կրել հետևանքների համար:

Վարձատուի և վարձակալի համաձայնությամբ կարող են վաղաժամկետ լուծել պայմանագիրը:

2.5. Վարձավճարի չափը ամսեկան կազմում է **120.000/հարյուր քսան հազար/ՀՀ դրամ , որը վարձակալը փոխանցելու է** յուրաքանչյուր ամսվա 05-ից 10-ը ընկած ժամանակահատվածում բանկային փոխանցման միջոցով: Կոմունալ բոլոր տեսակի ծախսերը /գազ, էլեկտրոէներգիա, ջուր/ կատարվում է վարձակալի կողմից :

2.6. Շինության գույքահարկը վճարում է վարձատուն:

2.7. Վճարներն ուշացնելու դեպքում Վարձակալը վարձատուին վճարում է տուգանք համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

2.8. Հարկային բոլոր պարտավորությունները կատարվում է վարձակալի կողմից:

2.9. Տուգանքի / տուգանքի կամ տույժի / վճարումը կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտականությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց:

2.10. Վարձատուն պատասխանատվություն չի կրում, գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են վարձակալին կամ պետք է վարձակալի կողմից հայտնաբերվեին

2.11. Գույքը գնելիս, կամ գույքը վարձակալության հանձնելիս դրա սարքինությունն ստուգված է:

Գույքը վարձակալության է տրվել սկսած 01/11/2014թ.-ից մինչև 01/11/2015թվականը.

Վարձատուի և վարձակալի համաձայնությամբ վաղաժամկետ պայմանագիրը լուծելու դեպքում կողմերը պարտավորվում են նախորդք 2/երկու/ամիս առաջ նախազգուշացնեն միմյանց :

2.12. Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամ լուծվել, եթե վարձակալը

2.10.1.Գույքն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով:

2.10.2.Էականորեն վատթարացել է գույքի վիճակը.

2.10.3.Սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրացնելուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը և այլն:

2.10.4.Խախտել է պայմանագրով նախատեսված որևէ կետի պահանջը:

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է առաջին ատյանի դատարանի քննության:

2.13. Սույն պայմանագրով կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից: Սույն պայմանագրին կից հավելվածները դրա անբաժանելի մասն են:

2.14. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 4/չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից մեկը պահվում է նոտարական գրասենյակի վարույթում, իսկ մնացած օրինակները տրվում է կողմերին:

Պայմանագրի տեքստը նոտարի կողմից ընթերցվեց բարձրաձայն:

Տեքստում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ չեն կատարվել:

ՎԱՐՁԱՏՈՒ **ՎԱՐՁԱԿԱԼ**

Հայաստանի Հանրապետության անունից
Երկու հազար տասնչորս թվականի յոթը նոյեմբերի

Սույն պայմանագիրը հաստատված է իմ՝ Գյումրի նոտարական տարածքի նոտար՝
ՌՈԲԵՐՏ ՄՈՒԿՈՒՉՅԱՆԻՍ կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեց իմ ներկայությամբ:
Կողմերի ինքնությունը, գործունեությունը նրա ներկայացուցչի լիազորությունները ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ վարձատուի իրավունքները ստուգված են:
ՀՀ քաղ. օրի. 611 հոդվածի համաձայն սույն պայմանագրից ծագող իրավունքները 30օրյա ժամկետում, գրանցման են ենթակա անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:
ԳՐԱՆՑՎԱԾ Է ՍԵՂԱՆԱՄԱՏՅԱՆՈՒՄ ԹԻՎ 9224
ԳԱՆՁՎԱԾ Է ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ և ծառայության վճար համաձայն
ՀՀ «Տուրքերի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների

ԳՅՈՒՄՐԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ

ՆՈՏԱՐ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

01.11.2015թ.
ք. Գյումրի

Սույն համաձայնագիրը կնքվում է Գյումրու §Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա¦ ՓԲԸ ի՝ դեմս տնօրեն Գ. Ադամյանի (այսուհետ **Վարձատու**) և «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի՝ ի դեմս Կարինե Թայիրյանի միջև (այսուհետ **Վարձակալ**), այն մասին, որ կողմերի միջև կնքված 07.11.2014թ-ի վարձակալության պայմանագրի 2.1.1 կետը այսուհետ կարդալ հետևյալ խմբագրությամբ.

2.12. Պայմանագրի գործողության ժամկետը երկարացվում է մինչև 01.11.16թ.:

Համաձայնագիրը գրված է հայերեն լեզվով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ և հանդիսանում են 07.11.2014թ. կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:

Վարձատու

Գյումրու «Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ

(ելան՝ ոգՀԱՆՅԱՆ)

Վարձակալ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ

(ելան՝ ոգՀԱՆՅԱՆ)

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

01.11.2016թ.
ք. Գյումրի

Սույն համաձայնագիրը կնքվում է Գյումրու «Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ ի՝ դեմս տնօրեն Գ. Ադամյանի (այսուհետ **Վարձատու**) և «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի՝ ի դեմս Կարինե Թայիրյանի միջև (այսուհետ **Վարձակալ**), այն մասին, որ կողմերի միջև կնքված 07.11.2014թ-ի վարձակալության պայմանագրի 2.1.1 կետը այսուհետ կարդալ հետևյալ խմբագրությամբ.

2.12. Պայմանագրի գործողության ժամկետը երկարացվում է մինչև 31.01.17թ.:

Համաձայնագիրը գրված է հայերեն լեզվով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ և հանդիսանում են 07.11.2014թ. կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:

Վարձատու	***Վարձակալ***
Գյումրու «Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

01.02.2017թ.
ք. Գյումրի

Սույն համաձայնագիրը կնքվում է Գյումրու «Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ ի՝ դեմս տնօրեն Գ. Ադամյանի (այսուհետ **Վարձատու**) և «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի՝ ի դեմս Կարինե Թայիրյանի միջև (այսուհետ **Վարձակալ**), այն մասին, որ կողմերի միջև կնքված 07.11.2014թ-ի վարձակալության պայմանագրի 2.1.1 կետը այսուհետ կարդալ հետևյալ խմբագրությամբ.

2.12. Պայմանագրի գործողության ժամկետը երկարացվում է մինչև 01.05.2017թ.:

Համաձայնագիրը գրված է հայերեն լեզվով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ և հանդիսանում են 07.11.2014թ. կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:

Վարձատու

Գյումրու «Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ

(ստորագրություն)

Վարձակալ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ

(ստորագրություն)